18 հուլիսի 2019 թվականի N 917 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 493-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 12-ի «Օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու և մերժելու կարգը և ժամկետները, համապատասխան աշխատանքով օտարերկրացուն չապահովելու դեպքում գործատուի կողմից ծախսերի հատուցման կարգը և չափերը, օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և բարձր որակավորում ունեցող օտարերկրացի մասնագետներին առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք տվող մասնագիտությունների ցանկերը սահմանելու մասին» N 493-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել Օտարերկրա-

ցիներին աշխատանքի թույլտվության տրամադրման և օտարերկրացիների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի հաշվառման էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման ծրագրի նախագիծը:».

2) որոշման N 1 հավելվածի՝

ա. 2-րդ կետը «պատվիրված նամակով» բառերից հետո լրացնել «կամ էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային ստորագրության առկայության դեպքում,» բառերով,

բ. 5-րդ կետը «գրավոր» բառից հետո լրացնել «կամ էլեկտրոնային եղանակով» բառերով,

գ. 10-րդ և 18-րդ կետերը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Հաշվառման գրանցամատյանը վարվում է նաև էլեկտրոնային եղանակով:»,

դ. 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Աշխատանքի թույլտվությունը կամ աշխատանքի թույլտվության մերժման մասին գրավոր ծանուցումը տրամադրվում է երկու հավասարազոր օրինակով, որոնցից մեկ օրինակը գործատուն փոխանցում է տվյալ օտարերկրացուն՝ այն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում:»,

ե. N 1 ձևով հաստատված աղյուսակի 2-րդ սյունակում «աշխատանքի» բառը փոխարինել «աշխատատեղի» բառով, 5-րդ սյունակը «Աշխատավարձը» բառից հետո լրացնել «(առանց հարկերի և աշխատավարձից պահվող այլ վճարների)» բառերով, 6-րդ սյունակը «Աշխատաժամանակի տևողությունը» բառերից հետո լրացնել «(շաբաթական)» բառով, իսկ 2-րդ սյունակից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին և 2.2-րդ սյունակներով.

«

Պաշտոնի կոդը՝ ըստ պաշտոնների դասակարգչի (յոթանիշ կոդը)	Թափուր աշխատատեղերի թիվը
2.1	2.2

»,

գ. N 2 ձևը «ՆԱԽԱՐԱՐ» բառից հետո լրացնել «ԿԱՄ ՆԱԽԱՐԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ» բառերով և հանել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ---------- ----------» բառերը,

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

է. N 4 ձևով հաստատված աղյուսակը 6-րդ սյունակից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-ին սյունակով.

«

Պաշտոնի կոդը՝ ըստ պաշտոնների դասակարգչի (յոթանիշ կոդը)
6.1

».

3) որոշման N 3 հավելվածով սահմանված ցանկի՝

ա. 1-ին կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) օտարերկրացու անձնագրի էլեկտրոնային պատկերատպված (սքանավորված) տարբերակը, ընդ որում՝ անձնագրի վավերականության ժամկետն առնվազն վեց ամսով պետք է գերազանցի աշխատանքի թույլտվության ժամկետը.»,

բ. 1-ին կետի 3-րդ ենթակետը «հաստատված» բառից հետո լրացնել «(եթե թափուր աշխատատեղը համալրելու համար պահանջվում է մասնագիտական կրթություն, որակավորում) կամ օտարերկրյա պետություններում ստացած գիտական աստիճանի վկայագիրը՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից համապատասխանեցված Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի վկայագրին» բառերով,

գ. 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Առողջապահության ոլորտում մասնագիտական գործունեություն ծավալող օտարերկրացի աշխատողի համար սույն կարգի 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված փաստաթղթի փոխարեն գործատուն ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 20-ի N 1081-Ն որոշմամբ սահմանված կար-

գով Հայաստանի Հանրապետությունում գործող կազմակերպությունների նախաձեռնությամբ կամ հրավերով օտարերկրացի բուժաշխատողների մասնագիտական կարճաժամկետ գործունեության համար տրամադրված թույլտվության էլեկտրոնային պատկերատպված (սքանավորված) տարբերակը:»,

դ. 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ կետով.

«3. Սույն ցանկի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը պահպանվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում:».

4) որոշման N 4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը չի տարածվում այն գործատուների վրա, որոնք օտարերկրացիների հետ կնքել են աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագրեր մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում, և այդ պայմանագրերի գործողության ժամկետն ավարտվում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Այն դեպքերում, երբ աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագրերի գործողության ժամկետն ավարտվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո կամ կնքվել են անորոշ ժամկետով, գործատուն մինչև 2020 թվականի հունվարի 1-ը սահմանված կարգով դիմում է աշխատանքի թույլտվություն ստանալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. հուլիսի 24
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
հուլիսի 18-ի N 917 - Ն որոշման

«Հավելված N 4
ՀՀ կառավարության 2016 թվականի
մայիսի 12-ի N 493 -Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԲԱՐՁՐ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐԻՆ ԱՌԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՎՈՂ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք ունեն՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված՝ միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում ներառված հետևյալ մասնագիտություններ ունեցող օտարերկրացիները՝

ա. «0612 Տվյալների բազաների և տեղեկատվական ցանցերի ստեղծում և կառավարում»,

բ. «0714 Էլեկտրոնիկա և ավտոմատացում»,

գ. «0811.01.5 Գյուղատնտեսագիտություն» մասնագիտությամբ «0811.01.01.5 Գյուղատնտես» որակավորումը, «0811.02.5 Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտությամբ «0811.02.01.5 Ֆերմեր» որակավորումը, «0811.03.5 Ջերմատնային տնտեսություն» մասնագիտությամբ «0811.03.01.5 Տեխնիկ-ագրոնոմ» որակավորումը.

2) գիտական աստիճան ունեցող օտարերկրացիները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշման հավելվածով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագի-

տական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկում ներառված հետևյալ մասնագիտություններ ունեցող օտարերկրացիները՝

ա. «0611 Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա»,

բ. «0412 Ֆինանսներ»,

գ. «0413 Կառավարում և վարչարարություն»,

դ. «0619 Համակարգչային անվտանգություն»,

ե. «0714 Էլեկտրոնիկա և ավտոմատացում»,

զ. «0721 Պարենամթերքի տեխնոլոգիա»:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ